ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՊԱՆԻ № 3 ՀԱՏՈՒԿ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
KAPAN SPECIAL
SHCOOL № 3

3301 Կապան, Սպանդարյան փողոց 4
Հայաստանի Հանրապետություն հեռ. (0285) 2-34-29

№ 31

,,14,, փետրվար 2017թ

Հավելված 7
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-17>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11>> ծածկագրով
Շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում "Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր" ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում *«ԿՀԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-17»*

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Սպանդարյան 4 հասցեով, մինչև 2017թ. Փետրվարի 23 -ը , ժամը 10.00-ն : Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Աննա Դավթյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը :

Հայտերը կբացվեն "Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր" ՊՈԱԿ-ի , ՀՀ. Սյունիքի մարզ, ք. Կապան, Սպանդարյան 4 հասցեով, N 201-սենյակում, 2017 թ.-ի փետրվարի 23- ին , ժամը 10.00- ին:

Գնման առարկա է հանդիսանում "Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր" ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ տնտեսական,սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձերքբերումը:

"Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր" ՊՈԱԿ-ի տնտեսական,սանհիգիենիկ և լվացքի միջոցների մատակարարման (որոնք կազմված են՝ 89 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 1, 2 հավելվածներում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված ՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ: Մասնակցի գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել << ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

"Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր" ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է kapan3@school.am

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5–րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը ՝ մինչև կարգի 110 – րդ կետի, օրենքի 7–րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը : Ընդ որում ՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով հիմք ընդունելով Օրենքի 31 – րդ հոդվածի 5 – րդ մասի և կարգի 75 –րդ կետի պահանջները:

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին՝ ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ էջ:

Հարգանքով՝ Մ. Ղազարյան